դադարած յոգնած ինչպէս նաև անձնա-
կան տկարութեան ենթակայ եղած էր
Ս. Էջ. Կաթուղիկոսը, բայց 'ի պատի-
ւ վկայականացն զորս գեր. Պատրիարքն Կ.
պոլսոյ տուած էր նոցին արժանապա-
տուէից, բարեհաճեցաւ հաստատեցնելով
զանոնք աստ 'ի Ս. Էջմիածին, յետ պսա-
կելոյ Եպիսկոպոսական աստիճանով վե-
րադարձուց իւրեանց պաշտօնատեղերը։

---

Համայն Ս. միաբանութեանս կողմանէ Արարատը մի քաղցր պարտք կդնայ 'ի լուր Հայ ազգիս, իւր խորին շնորհակալութիւնը և ուրախութիւնը յայտնել ազգասէր Պ. Մկրտիչ Սանասարեանցին, որ գովելի իմն եռանդուն և ազգասէր զգացմամբ բորբոքեալ՝ ինչպէս ինն տեսակ նորաձև և վայելուչ գլխագրից՝ բոլորագրից՝ նոտրագրից գեղագրից և ն. տառից ևս թուանշանից և կէտանշանից մայրեր ընծայեց Մայր Ս. Աթոռոյս տպարանի, որք իւր բարենախանձ և Ազգօգուտ խոստմանց երախայրիքն պէտք է համարուին. նոյնպէս Արարատէս 14 տարեկան օրինակ բաժանորդ ստորագրուեցաւ. որոնցմէ Զը Կարնոյ՝ Վանայ՝ Մշոյ՝ Աղեքսանդրապոլու՝ Թէհրանայ և Պաւլէժու ազգային դպրոցաց երկերկու օրինակ նուիրեց. զորս ըստ խնդրանացն խմբագրութիւնը կուղարկէ միշտ։

---

Ի ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԱՅՈՑ ԳՐԻ

ԹՂԹԻ

Արժանապատիւ խմբագրութեան
Արարատ ազգօգուտ ամսագրոյ։

Ազգօգուտ ձեռնարկութիւնն ձեր, յորում անխոնջ դեգերիք գլուխ և զցերեկ 'ի լուսաւորութիւն տանս Թորգոմեան, ոչ սակաւ ուրախալից զգացմունս պատճառեաց իմում սրտի. յորմէ խոստովանիմ՝ իբրև հարազատ զաւակ սիրելի ազգիս Հայկայ խանդակաթ փափագանօք և ես ցանկամ ըստ իմովսանն կարի ինչ երկասիրութեամբ մասնակցիլ այնմիկ։ Ահաւասիկ յամսեանն յունիսի տարւոյս յետ աւարտման հարցաքննութէ յեկեղեցական վարժարանի հայոց քաղաքիս փառաւոր հանդիսիւ, և գերօրինակ յառաջադիմութեամբ աշակերտելոցն 'ի նմին յուսումն հայկական լեզուի՝ հուսկ ուրեմն ես իբրև նախկին աշակերտ վերոյիշեալ դպրոցի հարկ յանձին կալայ ընթեռնուլ 'ի լուր հանդիսականացն զառ 'ի յինէն յօրինեալ ճառ իմն զուսումնասիրութենէ. զոր ընդ այսմ խորին յարգանօք մատուցանելով Արարատայ խմբագրութեան, խնդրեմ բարեհաճիլ հրատարակել զայն 'ի լուր համօրէն Հայկազանց, միանգամայն խոստանալով հետզհետէ մատուցանել նաև զզանազան ճառս զոտանաւորս և զքերթուածս իմ և զաշակերտակցաց իմոց կարևորս, օգտակարս և ըզբերկրեցուցիչս ազգասէր սրտից,

Նուաստ ծառայ ձեր դպիր Լևոն Մեծուզեանց,